ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4928-Ա   « 08 » դեկտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
30-Ի Հ.4430-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 01.12.2025թ. հ.4430-25 եզրակացությունը.

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի «Երևան, Շենգավիթ, Շարուրի փողոց հ.26ա շենք հ.21 բնակարան հասցեում քաղաքացիներ Անահիտ Ռաֆիկի Ենգոյանի, Բաբկեն Գրիգորի Մուրադյանի, Ջուլիետտա Գրիգորի Մուրադյանի, Անահիտ Բաբկենի Մուրադյանի, Լիլի Բաբկենի Մուրադյանի և Սուսաննա Արսենի Փիլոյանի կողմից կատարված ինքնակամ կառույցն օրինականացնելու մասին» հ.4430-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետում՝ «416360 (չորս հարյուր տասնվեց հազար երեք հարյուր վաթսուն)» բառերը փոխարինել «184755 (մեկ հարյուր ութսունչորս հազար յոթ հարյուր հիսունհինգ)» բառերով.

2) Որոշման 4-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով նախատեսված ժամկետը սահմանել 60-օրյա՝ սույն որոշման ընդունման պահից:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական՝ դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ